Beth Israel Lahey Health
Lahey Hospital & Medical Center

Ֆինանսական աջակցության քաղաքականության պարզ լեզվով ամփոփում

Lahey Hospital & Medical Center-ը և Lahey Medical Center, Peabody-ն (միասին՝«LHMC»), յուրաքանչյուրը ոչ առևտրային շտապ օգնության հիվանդանոց, ստեղծվել են Մասաչուսեթսի և հարակից շրջանների բնակիչների կարիքները հոգալու համար: Հիվանդանոցները պարտավորվում են հիվանդներին բժշկական ծառայություններ մատուցել՝ անկախ նրանց վճարելու ունակությունից: LHMC-ն ընդունում է, որ ոչ բոլոր հիվանդներն ունեն ֆինանսական միջոցներ՝ իրենց հիվանդանոցային ծախսերը վճարելու համար: Պարզ լեզվով այս ամփոփագիրը հիմնական տեղեկատվություն է տալիս մեր ֆինանսական աջակցության քաղաքականության վերաբերյալ:

LHMC ֆինանսական աջակցության քաղաքականություն

Մեր ֆինանսական խորհրդատվության անձնակազմը անվճար կօգնի անհատներին դիմել համապատասխան պետական առողջապահական ապահովագրության ծրագրերին և լրացնել ֆինանսական օգնության հայտը: Ֆինանսական աջակցության ծրագիրը համապատասխան հիվանդներին անվճար տրամադրում է անհետաձգելի և այլ անհրաժեշտ բժշկական ծառայություններ: Անկախ նրանից՝ հիվանդները ապահովագրված չեն կամ թերի են ապահովագրված, նրանք կարող են դիմել ֆինանսական օգնության համար: Հաստատումից հետո հիվանդները կարող են ստանալ հետևյալ օժանդակությունը՝ համապատասխան բժշկական ծառայությունների համար ցանկացած հիվանդի պատասխանատու մնացորդի վերաբերյալ.

Բարեգործական խնամք

Աղքատության դաշնային մակարդակ	Օգնության չափը
400% -ին հավասար կամ պակաս	100%

Բժշկական խնդիրներ

100% զեղչ այն հիվանդներին, որոնց բժշկական ծախսերը մեծ կամ հավասար են իրենց ընտանիքի համախառն եկամտի 25% -ին:

ԿԱՐԵՎՈՐ. Ցանցից դուրս համավճարները, համապահովագրությունները և չհատուցվող գումարները (ֆրանշիզաներ) իրավասու չեն ֆինանսական օգնության: Ոչ մի դեպքում ֆինանսական օգնության իրավունք ունեցող հիվանդից չի գանձվի ապահովագրություն ունեցող հիվանդներից ընդհանուր առմամբ գանձվող գումարից ավել գումար:

Ինչպես ձեռք բերել մեր ֆինանսական աջակցության ծրագրի քաղաքականության և դիմումի պատճենները

Կարող եք անվճար ձեռք բերել մեր քաղաքականության և դիմումի ձևի պատճենները հետևյալ ձևերով՝

- https://www.lahey.org/lhmc/your-visit/insurance-billing-records/financial-counseling-assistance/
- Այցելեք մեր ֆինանսական խորհրդատվության գրասենյակ, որը գտնվում

Lahey Hospital & Medical Center
Main Lobby
41 Mall Road
Burlington MA, 01803

- Ստացեք պատճենները փոստով կամ էլեկտրոնային փոստով՝ զանգահարելով (781)744-8815 (կարող եք նաև զանգահարել այս համարով՝ դիմելու գործընթացի հետ կապված օգնություն ստանալու համար)

Վերանայված 8/2020

Ֆինանսական աջակցության քաղաքականությունը, դիմումը և պարզ լեզվով ամփոփումը հասանելի են մի քանի լեզուներով

Ֆինանսական աջակցության քաղաքականությունը, դիմումը և պարզ լեզվով ամփոփումը հասանելի են հետևյալ լեզուներով՝

Ֆրանսերեն	Հայիթական կրեոլերեն	Իտալերեն
Պորտուգալերեն	Հունարեն	Ռուսերեն
Հայերեն	Հինդի	Գուջարաթի
Փանջաբերեն	Պարզեցված չինարեն	Ավանդական չինարեն
Իսպաներեն	Ճապոներեն	Կորեերեն
Մոն-քմերերեն, կամբոջերեն	Վիետնամերեն	Արաբերեն
Անգլերեն		

Ֆինանսական աջակցության քաղաքականությանը համապատասխանող ծածկույթ

LHMC-ի աջակցության իրավասություն ունենալու համար հիվանդները պետք է դիմեն պետական բժշկական ապահովագրության ծրագրերին՝ ֆինանսական օգնության դիմելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում: Հիվանդները /երաշխավորները կարող են ցանկացած պահի դիմել ֆինանսական աջակցության՝դուրսգրման հաշվի քաղվածքը ստանալուց հետո երկու հարյուր քառասուն (240) օրվա ընթացքում:

Վերադարձեք լրացված հայտը հետևյալ հասցեով՝

Ֆինանսական խորհրդատվության գրասենյակ
41 Mall Road
Burlington MA, 01803

Հաստատման դեպքում ֆինանսական աջակցությունը կկիրառվի հետևյալ հաստատություններում՝

- Anna Jaques Hospital
- Addison Gilbert Hospital
- BayRidge Hospital
- Beth Israel Deaconess Medical Center
- Beth Israel Deaconess Hospital-Milton
- Beth Israel Deaconess Hospital-Needham
- Beth Israel Deaconess Hospital-Plymouth
- Beverly Hospital
- Lahey Hospital & Medical Center
- Lahey Medical Center, Peabody
- Mount Auburn Hospital
- New England Baptist Hospital
- Winchester Hospital

Նշում. Որոշ բժիշկներ չեն ընդգրկվում LHMC-ի ֆինանսական աջակցության քաղաքականության ծրագրում: Խնդրում ենք այցելել մեր կայք կամ կապվել մեզ հետ (781) 744-8815 հեռախոսահամարով: